

ՀՀ Ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 18/1

23 սեպտեմբերի 2014 թ.

Քննարկվեց «Ինստիգեյթ» ՓԲԸ 25.08.2014 թ-ի դիմում-գանգատը ՀՀ ՖՆ Նոր Նորքի ՀՏ 15.08.2014 թ-ի թիվ 1008721 ստուգման ակտի դեմ:

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ Իրավախախտումների հայտնաբերման ու վարչական վարույթների իրականացման վարչությունում նյութեր են ստացվել «Ինստիգեյթ» ՓԲԸ վերաբերյալ: Նյութերի ուսումնասիրության արդյունքում «Ինստիգեյթ» ՓԲԸ կողմից հարկերը վճարելուց չարամտորեն խուսափելու դեպքի կապակցությամբ ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով 18.09.2014 թ-ին հարուցվել է թիվ 83164514 քրեական գործը: Այնուհետև, քրեական գործը ուղարկվել է ՀՀ ՖՆ քննչական վարչություն՝ նախաքննություն կատարելու համար: Ներկայումս քրեական գործի նախաքննությունը շարունակվում է:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետի համաձայն. «Վարչական մարմինը պարտավոր է կասեցնել վարչական վարույթը, եթե՝ ա) անհնարին է տվյալ վարույթի արդյունքում ակնկալվող վարչական ակտի ընդունումը մինչև սահմանադրական, վարչական, քաղաքացիական կամ քրեական դատավարության կարգով քննվող գործով որոշում (դատական ակտ) կայացնելը»:

Քննարկվող դեպքում, հաշվի առնելով, որ ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով հարուցվել և քննվում է թիվ 83158814 քրեական գործը, անհնարին է տվյալ վարույթի արդյունքում ակնկալվող վարչական ակտի ընդունումը, մինչև քրեական դատավարության կարգով որոշում կայացնելը:

Ելնելով վերոգրյալից, ինչպես նաև ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետի դրույթներով՝ Հանձնաժողովը գտնում է, որ «Ինստիգեյթ» ՓԲԸ գանգատի հիման վրա ՀՀ Ֆինանսների նախարարությունում հարուցված վարչական վարույթը ենթակա է կասեցման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

«Ինստիգեյթ» ՓԲԸ 25.08.2014 թ-ի դիմում-գանգատի հիման վրա ՀՀ Ֆինանսների նախարարությունում հարուցված վարչական վարույթը կասեցնել:

Հանձնաժողովի նախագահ՝

**Վ.ՄԻՐՈՒՅԱՆ**